

Հիվանդանոցում

Համլետը պառկած էր անվերջ խավարում: Նրա մտքում միայն երկու բան էր պտտվում, առաջինը՝ որ մահճակալն անսովոր կոշտ է, եւ երկրորդը՝ որ վերմակը էլի գետնին է ընկել:

Նա ձգվեց, որպեսզի բարձրացնի այն, բայց մատները դիպան ոչ թե փափուկ կտորին, այլ սառը հատակին: Ուղեղում ծնվեց եւս մեկ միտք՝ իր սենյակում նույնիսկ գիշերվա ժամը երկուսին այդքան մուլթ չի լինում:

Համլետը վեր թռավ: Կտրուկ շարժումից գլուխը պտտվեց, եւ աչքերի առաջ հայտնվեցին գունավոր պարող բծեր:

Շոշափելով պատերը՝ Համլետը գտավ անջատիչը եւ միացրեց լույսը: Սպիտակ սենյակ, պահարաններ՝ ապակե դռնակներով, ժամանակից դեղնած պաստառներ...

Ես հիվանդանոցում ի՞նչ եմ անում:

Աղյուսյակ՝ տեսողությունը ստուգելու համար... Համլետը հիշեց, որ մոր հետ եկել էր ակնաբույժի մոտ:

Իսկ հետո...

Պատուհանները փակ էին մետաղյա փեղկերով:

Հա, ինչ-որ բան էղավ...

Մտածմունքներից նրան դուրս քաշեց մեկի ձայնը: Այդ ձայնը անիծում էր երկինքը, այս աշխարհն ու հորը:

Համլետը բացեց դուռը: Գրասենյակից թափանցած լույսի տակ երեւաց տղա՝ Համլետից մեծ, գունատ, զայրացած հայացքով եւ խառնված մազերով: Մի ձեռքում տղան պահում էր վառվող փայտի կտոր, որը առաջ, հավանաբար, աթոռի կամ փոքր սեղանի ոտիկ էր:

Տղան նայեց Համլետին, կարծես նրա դիմաց կանգած էր ոչ թե սովորական երեխա, այլ միեղջյուր, ու հարցրեց.

- Դու կենդանի՞ ես:

- Ի՞նչ:

Լիլիթը համեմատաբար քիչ էր աշխատել հիվանդանոցում եւ թերապեւտ Սեդայի հետ ծանոթացել էր ընդամենը կես տարի առաջ, բայց նա այն մարդկանցից էր, ում մի քանի ժամս էլ է հերիք, որպեսզի սկսի մեկին համարել իր լավագույն ընկերը: Երեւի դա էր հիմնական պատճառը, որ Լիլիթն այդքան վախեցավ, երբ լույսը միացնելուց անմիջապես հետո տեսավ Սեդայի դիակը:

Իհարկե, հնարավոր է՝ դա նաեւ նրանից էր, որ Լիլիթը առաջին անգամ էր տեսնում այդչափ քայքայված մարմին, բայց այն, որ մարմինը պատկանում էր ընկերուհուն, անկասկած, նույնպես շատ կարեւոր էր:

Մտածելու ունակությունը վերադարձավ Լիլիթին մի ամբողջ անվերջություն հետո: Պետք էր վազել այդտեղից, օգնություն կանչել: Բայց պատուհանները եւ

դուռը, հավանաբար՝ նույնպես, փակ էին մետաղյա փեղկերով, իսկ Լիլիթը չգիտեր, թե ինչպես դրանք բացել:

Նա վերցրեց հեռախոսը, բայց այն լիցքաթափվել էր:

Չարմանալի չի: Ես էստեղ ահագին ժամանակ եմ անցկացրել:

Մինչև Լիլիթը փնտրում էր սեղանի դարակներում լիցքավորիչը, մտածեց, որ հիվանվանոցում կարող են ուրիշ մարդիկ էլ գտնվել, եւ որ նրանց կարող է բժշկի օգնություն պետք լինել:

Պետք ա բոլորին գտնել:

Նա վերցրեց առաջին օգնության պայուսակ, ջուր եւ դուրս եկավ սենյակից, առանց ընկերուհու դիակին նայելու:

Վազգեն Կարապետիչը արթնացավ մութ... արկղում: ՉԷ՛, չԷ՛,

պահարանում: Հիշողությունները դանդաղ էին վերադառնում. ցավոք ծնկի պատճառով նա եկել էր բժշկի եւ ինքնուրույն էր մտել պահարան, երբ միջանցքից ինչ-որ մեկը գոռացել էր՝ թաքնվեք:

“Ուրեմն ինձ պատանդ չեն վերցրել: Արդեն լավ ա”:

Մարմինը ցավում էր անհարմար դիրքից, կոկորդը չոր էր, իսկ փորը՝ դատարկ:

Վազգեն Կարապետիչը ուզում էր դուրս գալ, բայց մտափոխվեց, երբ դրսից քայլեր լսեց: Առաջացան հարցեր՝ ումի՞ց էր պետք թաքնվել, եւ արդյո՞ք վտանգն արդեն անցել է:

Վազգեն Կարապետիչը ամբողջ իր եռությամբ վերածվել էր լսողության՝ ահա անհայտը ինչ-որ բան դրեց սեղանին, մոտեցավ պահարանին, խշշացին գետնին ընկած թղթերը...

Անցի՛, անցի՛, անցի՛...

Նա նույնիսկ չէր շնչում, վախենալով գտնված լինել, բայց դա էլ չօգնեց. անհայտը բացեց դուռը:

Վազգեն Կարապետիչ: Հիվանդանոցում շրջող կատակների կեսի հերոս, 80-ամյա փնթփնթան, որը վախենում էր ամեն քերծվածքից եւ կառչում էր երկրային կյանքից, ինչպես երեխան է մանկապարտեզում կառչում նոր խաղալիքից, որ չվերցնեն ու չջարդեն:

Լիլիթն ընդամենը մի քանի անգամ էր անձամբ հանդիպել Վազայեն

Կարապետիչին եւ չճանաչեց նրան առաջին հայացքից: Ուղեղն այդ պահին

չգտավ ոչ մի նմանություն միշտ կոկիկ, սափրված ծերուկի եւ այն խառնաշփոթի հետ, որը հարձակվեց Լիլիթի վրա, երբ նա բացեց պահարանի դուռը:

- Բայց ես հո ինադու չխփեցի ձեզ,- ասում էր Լիլիթը, մինչեւ Վազգեն

Կարապետիչը ջուր էր խմում:- Դուք գոռալով դուրս թռաք, ես էլ վախեցա...

- Վախեցա՞ր: Էդ ես վախեցա:

Վազգեն Կարապետիչը մի կողմ դրեց կիսադատարկ շիշը,- նստած եմ իմ համար,

նոր եմ արթնացել, ու հայտնվում ա ինչ-որ մեկը՝ ձեռքում վառվող ջահ: Կրակ

ինչի՞ համար ես վառել, ա՛յ աղջիկ: Հեռախոսով չե՞ս կարա լույս տալ: Ես էս ծխից

կմռնեմ: Էդ ես ուզում, չե՞:

- Պարո՞ն Վազգեն, հանգստացե՛ք, խնդրում եմ: Ծուկը անհրաժեշտ ա, եթե ուզում եք կենդանի մնալ:

- Կենդանի: Ծուխը ինձ ի՞նչ օգուտ կարա տա: Կարող ա՞ր էդ ձեր հատուկ բժշկական նշաններից ես ուղարկում, որ մեզ գտնեն: Թե՞ ուզում ես, որ թշնամին վախենա խեղդվի՝ մեզ չմոտենա:

- Այո, պարո՞ն Վազգեն, ծուխը պետք ա մոծակներին քշելու համար:
- Մոծակների՞ն:

Վազգեն Կարապետիչը նայեց շուրջը ու նոր նկատեց այստեղ-այնտեղ երեւացող կարմիր կետիկները:

Նիկը, ընդունվելով հիվանդանոց CCTV աշխատակից, չէր մտածում, որ կհայտնվի փակված այդ նույն հիվանդանոցում՝ վառված հեռախոսով ու թունավոր մոծակների շրջապատում: Գլխավոր դռների դիմաց կանգնած՝ նա մտածում էր, որ երբեք հանգուցյալ հայրը այդքան ճիշտ չէր եղել, երբ ասել էր. “Նոռմա՛լ սովորի, թե չէ վերջը զիբիլանցում կսատկես”:

Փտած դիակների հոտը ստեղծում էր որոշ նմանություն հիվանդանոցի եւ աղբանոցի միջեւ: Իսկ դիակները շատ էին: Մանավանդ գլխավոր դռների դիմաց: Դեշտությամբ կարելի էր պատկերացնել, թե ինչպես էին մարդիկ վազում, գոռում, իրար տրորում՝ փորձելով փրկվել:

Եվ Նիկը արդեն գրեթե համոզված էր, որ շուտով կդառնա այդ դիակներից մեկը, եթե իրեն ոչ ոք չփրկի: Ու երկինքը լսեց հայիոյանքների հետ խառնված նրա խնդրանքները եւ նվիրեց փրկիչ...

Չնայած տասներկու տարեկանը հազիվ լրացած երեխային դժվար էր այդպես անվանել: Եթե Նիկը ընտրության հնարավորություն ունենար, կնախընտրեր այդ դրության մեջ հանդիպել աշխարհի ամենաուժեղ մարդուն կամ համակարգչային հանճարի: Եթե Նիկը ընտրության հնարավորություն ունենար, կնախընտրեր չհայտնվել այդ դրության մեջ: Բայց, այն է, ինչ ունենք...

Անիծյա՛լ երկինք:

- Դու կենդանի՞ ես:
- Ի՞նչ:

Նիկը բարձրացրեց հայացքը երեխայից եւ զննեց գրասենյակը, որից նա դուրս էր եկել՝ ամեն ինչ մաքուր էր, մարմիններ չկային... Եթե այդտեղ փակված նստես, կարելի էր մտածել, որ ոչ մի արտառոց բան չի պատահել:

Հըըը չգիտի...

- Հե՛տ գնա:
- Ի՞նչ, - կրկնեց երեխան:
- Հե՛տ գնա, արա՛գ, - Նիկը մի փոքր հրեց նրան դեպի ներս եւ փակեց դուռը: Մի քանի մոծակ հասցրեցին մտնել նրա ետեւից:
- Ես մի հատ բռնի՛, - ասաց Նիկը, երեխային փոխանցեց ջահը եւ վերցրեց բժշկի սեղանից ծանր թղթապանակ, որը Սովետի ժամանակների էր:

Մինչեւ Նիկը ոչնչացնում էր մոծակներին, երեխան լուռ նայում էր նրան՝ ձգված ձեռքում պահելով փայտը:

- Հեսա կհանգի: Նորն ա պետք:
- Անունդ ի՞նչ ա, - հարցրեց Նիկը՝ վերցնելով կրակը:
- Հա... Համլետ, - աչքերը գրեթե ամբողջովին թաքնվել էին շեկ մազերի տակ: Նա կծկվել էր եւ գրեթե կպել պատին, կարծես վախենում էր:
- Բարեւ, Համլե՛տ: Ես Նիկն եմ: Հիվանդանոց ինչի՞ համար էիր Էկել:
- Ակնոցի:
- Մենա՞կ էիր:

Նա որոշ ժամանակ լռեց պատասխանելուց առաջ:

- Չէ... Մայրիկիս հետ էի:

Մայրիկի... Վատ աս:

Նիկը մտածեց իր մոր մասին. այդ չարաբաստիկ օրը նա վիրահատություն էր անցկացնում:

Ինչ լավ աս, որ ուրիշ հիվանդանոցում էր:

Համլետը նայեց, թե ինչպես է նոր ծանոթը ջարդում ակնաբույժի ճոճոռան աթոռը, ու հարցրեց.

- Իսկ... ի՞նչ աս պատահել:

Ինձ էլ աս հետաքրքիր:

Արթնանալուց անմիջապես հետո Նիկը դիտեց տեսախցիկների նկարահանածը եւ տեսավ, թե ինչպես հինգերորդ հարկից իջավ մոծակների մի ամբողջ ամպ:

Մարդիկ փորձում էին պաշտպանվել, բայց մոտ մեկ թուփ անց քնեցին, եւ արևախումբներին ոչինչ չխանգարեց վարակել նրանց ինչ-որ մահացու վիրուսով:

Նիկի բախտը բերեց՝ նրա սենյակը գտնվում էր ներքնահարկում, դուռը փակ էր, բանալին իր անցքում էր՝ ոչ մի միջատ չէր կարող ներխուժել: Այն սենյակի դուռը,

որտեղ Համլետն էր, հավանաբար, նույնպես լավ փակել էին մինչեւ մոծակների հայտնվելը:

- Դե, ո՞նց ասեմ... Ստեղ վտանգավոր մոծակներ կան ու... մենք քո հետ մենակ ենք: Պետք աս արագ դուրս գալու ձեւ գտնենք, մինչեւ մեր հետ վատ բան չի եղել:

Համլետի դեմքից երեւում էր, որ նա բավարարված չէր այդքան սուղ ինֆորմացիայով, բայց Նիկը չէր պատրաստվում ավելին պատմել: Նա երկու նոր ջահ շինեց, դրանցից մեկը տվեց Համլետին, նորից ոտից գլուխ գննեց նրան եւ ասաց.

- Գրագ կգամ՝ ահավոր սոված ես: Արի գնանք բուֆետ, հետո նոր մտածենք՝ ոնց ենք դուրս գալու:

Եվս մեկ հետաքրքիր փաստ, որը հայտնաբերել էր Նիկը, տեսախցիկների նկարածը նայելով՝ նրանք քնել էին գրեթե մեկ շաբաթ:

Համլետը նստել էր պլաստմասե կանաչ աթոռին, ուտում էր երրորդ սնկերսը և հետևում Նիկին: Վերջինս գրասենյակներից մեկում գտել էր լիցքավորիչ, որին հիմա միացված էր Համլետի հեռախոսը, եւ սպասում էր, մինչեւ այն վերակենդանանա:

Նիկը նյարդայնացած տեսք ուներ՝ այս ու այն կողմ էր քայլում, քթի տակ երաժշտության սման ինչ-որ բան էր մոնչում, պատերին էր հարվածում:

Համլետը հայացքը ուղղեց վառվող կրակին, մի քիչ մտածեց ու գնաց թեյ պատրաստելու:

“Երբ որ դուրս գանք, մեր վրա ահավոր կջղայնանան փչացրած աթոռների համար”:

Նիկը զանգեց: Հեռախոսը դրեց ականջին եւ շշմած դեմքի արտահայտությամբ նայեց դեպի դատարկությանը: Հետո հեռախոսի էկրանին:

- Ես քու հերը անիծեմ,- նա բարձրացրեց ձեռքը՝ պատրաստվելով հեռախոսը հատակին նետել, բայց փոշմանեց եւ ասաց Համլետին,- կապ չկա: Ուրիշ բան աս պետք հորինել:

Նա մտավ խոհարարի սենյակը եւ մի թուփից դուրս եկավ հեռակառավարիչով: Միացրեց փոքրիկ հեռուստացույցը, որը կախված էր ճաշարանի անկյունում, բայց սպիտակ էկրանից բացի ոչինչ չհայտվեց:

Նա մտավ խոհարարի սենյակը եւ մի թուփից դուրս եկավ հեռակառավարիչով: Միացրեց փոքրիկ հեռուստացույցը, որը կախված էր ճաշարանի անկյունում, բայց սպիտակ էկրանից բացի ոչինչ չհայտվեց:

Նա մտավ խոհարարի սենյակը եւ մի թուփից դուրս եկավ հեռակառավարիչով: Միացրեց փոքրիկ հեռուստացույցը, որը կախված էր ճաշարանի անկյունում, բայց սպիտակ էկրանից բացի ոչինչ չհայտվեց:

- Ես էլ չկա,- հեռակառավարման վահանակը Նիկը չխնայեց եւ զցեց գետնին: Այն շրխկոցով բաժանվեց մի քանի մասի:- Մենք աշխարհից կտրված ենք: Համլետը նայում էր, թե ինչպես է գոլորշին բաժակից բարձրանում դեպի առաստաղն ու հալվում մթնոլորտի մեջ: Երբ նա փորձել էր միացնել լույսը, Նիկը թույլ չէր տվել: Ասել էր, որ երկու ջահն էլ է հերիք:

- Ի՞նչ անել, ի՞նչ անել,- կրկնում էր Նիկը մանտրայի նման, գլուխը այս ու այն կողմ պտտելով:

Համլետը վերցրեց տաք բաժակը, շրջանցեց անհասկանալի կույտը, որից տհաճ հոտ էր գալիս եւ մոտեցավ Նիկին:

- Իսկ մենք չե՞նք կարող, մ... ինքնուրույն բացել հիվանդանոցը:

- Ո՞նց: Դու էնքան ուժեղ ես, որ կարաս դուռը ջարդել:

Նիկը զայրացած ժամանակ սարսափելի էր:

- Չէ՛, բայց... կարող աստեղ լինի... դե, գիտե՞ս, ինչ-որ պուլտ, որ... որով կարելի աս դռներն ու պատուհանները բացել:

Նիկը չպատասխանեց: Նրա հայացքը Համլետից իջավ դեպի ջարդված հեռակառավարիչը:

Լիլիթը սեղանին դրեց հեռախոսը: Կապ չկար, և նա չէր պատկերացնում, թե էլ ինչպես կարելի էր օգնության կանչել: Վազգեն Կարապետիչը նստել էր կողքը եւ սեղմել էր կրծքին ջահը:

- Դե՛, - ասաց նա, երկար լռությունից հետո, - Եստեղից ո՞նց ենք դուրս գալու:

- Չգիտեմ: Հիմա միակ բանը, որ մենք կարող ենք անել, ուրիշ կենդանի մարդկանց փնտրելն է: Մեկ էլ տեսար՝ իրանք մի լավ միտք տան:

- Ուրիշ մարդկա՞նց, - Վազգեն Կարապետիչը չոր ծիծաղեց, - մինչեւ մենք ուրիշ մարդկանց ես մեծ հիվանդանոցում ման գանք, մեզ կարան կծեն: Է՛ս, - նա իր դիմաց թափահարեց կրակը եւ այն աշխուժացավ, - հարյուր տոկոսանոց պաշտպանությունն չի, իսկ ես դեռ չեմ պատրաստվում մեռնել:

Լիլիթը խորը շունչ քաշեց:

- Պարո՞ն Վազգեն, մոծակների մեծ մասը արդեն սատկել է, հիմա այդքան վտանգավոր չի:

- Մինչեւ իմ մոտակայքում կա գոնե մի ընտեց արնախում, կյանքիս վտանգ աս պառնում: Դու բժիշկ ես ու պետք աս մարդկանց փրկես:

“Հանգի՛ստ, Լիլո՛ւ, հանգի՛ստ: Մի՛ ջղայնացի, խուճապի մի՛ մատնվի: Էդ քեզ ոչ մի բանով չի օգնի”:

- Եվ ինչ եք դուք առաջարկո՞ւմ, պարո՞ն Վազգեն:

Վազգեն Կարապետիչը մտածեց՝ նայելով դռան կողքին պառկած դիակին, եւ ասաց.

- Գնա՛նք ճաշարան: Իմ տարիքում Եսքան երկար չուտելը վտանգավոր աս: Հա, ես էլ դեմ չեի լինի մի բան ծամել:

Լիլիթը վեր կացավ:

- Օրե՛յ, գնա՛նք: Կարող աս կուշտ փորին ավելի լավ մտածենք:

Նիկը փորփրում էր իր սեղանի դարակը և մտածում, թե ինչպես ինքը չհիշեց, որ կարող է բացել հիվանդանոցը:

- Գտա՛,- նա հանեց փոքրիկ բանալի, որը կրակի լույսի տակ բրոնզե էր թվում:
 - Ես հիվանդանոցի բանալի՞ն ա,- հարցրեց Յամլետը:
 - Յամարյա,- ասաց Նիկը եւ դրեց այն բանկոնի գրպանը:- Յինգերորդ հարկում մի հատ... Էէ... մեխանիզմ կա: Ես բանալին դրանից ա: Ավտոյի նման մեխանիզմը որ աշխատացնենք, պատուհանները ու դռները կբացվեն: Ու կփրկվենք:
 - Դե... գնացինք վերելի հա՞րկ:
 - Ըհը, գնացի՛նք:
- Աստիճաններով բարձրանալիս Նիկը կարծես ձայներ էր լսում, բայց երբ կենտրոնանում էր, դրանք անհետանում էին:
- Պետք ա ստեղից արագ փախչել:
- Նրա կողքով քայլող Յամլետը ոչ մի բանի վրա ուշադրություն չէր դարձնում՝ ո՛չ վտանգավոր մոտիկ թռնող մոծակներին, ո՛չ այս ու այնտեղ ընկած մարմիններին: Նա ընդամենը առաջ էր գնում ու խոսում.
- Ես ակնոց առաջին անգամ պետք ա դնեմ: Տեսողությունս ես վերջերս ա փչացել, բայց հըըը շատ վատ չի: Ու մեկ ա, ես մթության մեջ մի քիչ վատ եմ տեսնում... Մաման ասում ա, որ վատ լույսի տակ շատ կարդալուց ա, բայց ես կարդացել եմ, որ վատ լույսից տեսողությունը չի նստում, մենակ...
 - Յըը սպասի՛,- Նիկը կանգնեց եւ ուսից բռնեց Յամլետին, որ առաջ չգնա:
- Նրանք կանգնած էին չորրորդ եւ հինգերորդ հարկերի միջեւ: Վերելից տոգոց էր լսվում: Յամլետն էլ դա նկատեց ու լռեց:
- Ստե՛ղ մա,- ասաց Նիկը եւ, կրակն իր դիմացը պահելով, բարձրացավ մինչեւ աստիճանի կեսը, որպեսզի տեսնի, թե ինչ է կատարվում միջանցքում: Տեսածից ջահը ընկավ նրա ձեռքից:
- Մոծակներ: Ոչ թե այն հինգ-տաս մոծակները, որ թռչում էին գրասենյակներում, առաստաղների տակ եւ արագ փախչում էին ծխից, այլ հազարավոր մոծակներ մի միջանցքում, որոնք հաստատ սոված էին եւ շատ չէին վախենա կրակից:
- Անիծյա՛լ երկինք:

Յամլետը վախենում էր այդ հիվանդանոցից՝ մանավանդ հիմա, երբ միայնակ էին մնացել: Նա փորձում էր իր ձայնով լրացնել առաջացած դատարկությունը, բայց լռությունը չափազանց մեծ հրեշ էր, եւ մի հոգին ահռելի շենքում չէր կարող նրան հաղթել:

- Յըը սպասի՛,- Նիկը կանգնեցրեց Յամլետին:

Լռությունը սկսել էր տոգալ:

Ես... ի՞նչ ա:

- Ըստե՛ղ մա,- Նիկը արեց եւս մի քանի քայլ դեպի վերել եւ քարացավ:

Յամլետը տեսավ, թե ինչպես նրա ձեռքից ընկավ ջահը, եւ ինքն իրենը էլ ավելի ուժեղ սեղմեց:

- Անիծյա՛լ երկինք:

Նիկը շրջվեց:

- Մոծակներ,- շնչաց նա, իսկ հետո բղավեց,- փախի՛:

Եվ նրանք վազեցին, իսկ մոծակների այլքը հետեւեց նրանց: Յամլետը անցնում էր չորրորդ հարկը, բայց Նիկը հասավ նրան եւ քաշեց միջանցք:

Անսպասելիությունից նրա ջահը նույնպես ընկավ գետնին:

Նրանք մտան առաջին իսկ գրասենյակը եւ փակեցին դուռը: Երկուսի շունչն էլ տեղը չէր գալիս:

Նիկը նորից այս ու այն կողմ էր քայլում ու մրմնջում քթի տակ.

- Հիմա՞ ինչ անենք: Չգիտեմ... կարող ա...

Գլուխս պտտվում ա:

Համլետը նայեց իր ձեռքին՝ մատնեմատի մոտ կարմիր կետ էր հայտնվել:

Հա, ինչ-որ բան ծակեց:

- Նի՛կ:

- Հա՛:

- Եդ... մեխանիզմը ո՞րտեղ էր,- հարցրեց Համլետը՝ առանց հայացքը ձեռքից կտրելու. կետը մեծանում էր եւ ծավալ ձեռք բերում:

- Միջանցքի մյուս ծերում... Ճիշտ ա, ապրե՛ս: Կարելի ա մյուս կողմից մտնել: Տենց ավելի անվտանգ կլինի...

Քոր ա գալիս:

- ...բայց տրից պետք ա կրակ վառել... Ու լավ կլինի սպասել, մինչեւ մոծակները գոնե մի քիչ...

- Նի՛կ:

- Ի՞նչ:

- Կրակը էսքանից չի փրկի:

- Հա, ճիշտ ես ասում... Բա որ հրդե՞հ սարքենք: Մտում ա՝ մտածենք, ոնց ինքներս չվառվենք...

Հետաքրքիր ա, ինչքան ժամանակ ա մնացել:

- Նի՛կ:

- Ասա՛:

- Նստի՛, Էլի, գլուխս պտտվում ա:

Նիկը տոր նայեց Համլետին եւ հավանաբար որոշեց, որ նա չափից դուրս վատ տեսք ունի:

- Ի՞նչ ա եղել:

- Ոչ մի...

Համլետը մի փոքր լռեց, իսկ հետո ասաց.

- Ինձ... կծել են,- նա ցույց տվեց ձեռքը:

- Ի՞նչ: ՉԷ՛, չԷ՛, չԷ՛, չԷ՛...

Նիկը կլորացած աչքերով նայում էր Համլետի ձեռքին:

- Դու բանալին տո՛ւ: Ես կգնամ կբացեմ:

- ՉԷ՛, չԷ՛, չԷ՛... ՉԷ՛, ես քեզ թույլ չեմ տալիս: Մենակ չի կարելի:

- Բայց խի՞: Մեկ ա... մենակ էլ ա վտանգավոր, Երկուսով էլ: Համ էլ... ինձ արդեն կծել են,- խոսալը ավելի ու ավելի դժվար էր դառնում:

- ՉԷ՛, չի կարելի մենակ: Ի՞նչ գիտես, կարող ա թույլը արագ չի ազդում: Կարող ա՝ մենք հըլը ժամանակ ունենք...

Հիմա կքնեմ... Գրպանը...

Համլետը հանեց Նիկի գրպանից բանալին եւ դուրս վազեց սենյակից:

- Հե՛տ արի:

Մյուս կողմով գնալ, որ ավելի անվտանգ լինի:

Մոծակների մի մասն իջել էր չորրորդ հարկ: Նկատելով Համլետին, նրանք թռան

նրա ետեւից: Փակվող դռան ձայն լսվեց:

Համլետը բարձրացավ աստիճաններով եւ մի պահ կանգնեց:

Ո՞ր մի դուռն ա...

Մեկի կողքին բժշկի ազգանունն էր գրած:

Հա, ուրեմն մյուսը:

Նա մտավ սենյակ եւ փակեց դուռը: Այստեղ մոծակները շատ ավելի քիչ էին, բայց ոչ պակաս ակտիվ: Կծած տեղերը ծակում էին եւ քոր գալիս, ոտքերը հազիվ էին շարժվում:

Մեխանիզմը ուղիղ Չամլետի դիմաց էր:
Ես ա: Ես մտածում էի՝ ավելի մեծ կլինի...

-Չե՛տ արի:

Նիկը չհասցրեց բռնել Չամլետին՝ նա հայտնվեց տոզագող պատի ետեւում: Նիկը փակեց դուռը եւ մեջքով հենվեց դրան:

Հանգիստ, հանգիստ, հանգիստ...

Ոտնաձայները միջանցքից այլեւս չէին լսվում:

Ի՞նչ անել, ի՞նչ անել:

Նա քարացել էր: Մտքերը խառնվել էին իրար:

Օգնե՛լ: Ո՞նց: Բայց հո չե՛մ կարա...

Աչքերին ուժեղ լույս խփեց՝ պատուհանի մետաղյա փեղկերը բացվեցին: Դրսում անամպ երկինք էր, առավոտյան արեւ, որի շողերի տակ ամեն ինչ այնքան հանգիստ էր թվում:

Կարողացա՞վ: Պետք ա դուրս գալ ստեղծից:

Բա Չամլե՛տը:

Դո՞ւ չէիր ուզում, որ քեզ մեկը փրկի: Փրկեց, հիմա փախի՛:

Բայց ինքը մենակ չի կարողանա դուրս գալ:

Ու ինչ ես առաջարկո՞ւմ:

Նիկը հանեց գրպանից կրակայրիչը: Ծուխ էր պետք, բայց ձեռքերը դողում էին, եւ նա չէր կարողանում նույնիսկ սեղմակին սեղմել: Չայրացած նա մի կողմ շարտեց կրակայրիչը եւ դուրս վազեց գրասենյակից:

Եթե արագ շարժվեմ, ինձ չեն հասցնի կծել:

Չամլետը պառկած էր սենյակի մի ծայրում: Արնախումները պտտվում էին նրա շուրջը:

Արագ, արագ, արագ...

Նիկը ձեռքերի վրա առավ Չամլետին: Նրա աչքերը կիսաբաց էին, շնչառությունը՝ քնած մարդու շնչառության պես հանգիստ:

- Ես Էկա: Սպասի՛, հեսա կիջնենք ներքեւ, օգնություն կկանչենք:

Թեւը ծակեց, հետո եւս մեկ անգամ:

Արագ, արագ, արագ...

Նա վազում էր աստիճաններով, եւ Չամլետը անբնականորեն թեթեւ էր թվում:

- Չամլե՛տ, դու ինձ լսո՞ւմ ես:

- Հա...- սպիտակ թարթիչները դողացին:

- Լավ ա, համբերի՛: Նայի՛, արդեն դռներին հասանք:

Գլուխը պտտվում էր, սեւ մշուշը աչքերի դիմաց ամեն վայրկյան ավելի ու ավելի էր խտանում:

Արագ, արագ, արագ...

Լիլիթը վաղուց հրաշքների չէր հավատում, բայց այն, որ բոլոր պատուհաններն ու դռները բացվեցին, մինչեւ նա ճաշարանում սուրճ էր խմում, անկասկած, նման էր հրաշքի:

Վազգեն Կարապետիչը, դուրս գալով խոհարարի սենյակից, ասաց.

- Ըհը, գնացի՛նք ըստեղից, մինչեւ մեզ նորից չեն փակել:

- Պարոն Վազգեն, իսկ եթե հիվանդանոցը բացել են ներսի՞ց: Կարող ա մեր օգնությունը պետք գա:
- Իմ օգնությունը հաստատ ոչ մեկին պետք չի գա: Շնորհակալություն հաճելի ժամանցի համար, բայց ես արդեն գնում եմ:
Լավ, երեւի ճիշտ ա՛ ինքը ոչ մի բան չի կարողանա անել:
Լիլիթը վեր կացավ աթոռից:
- Տոնություն, պարո՛ն Վազգեն:
Նա դուրս եկավ ճաշարանից ու արդեն պատրաստվում էր բարձրանալ աստիճաններով, բայց հանկարծ միջանցքի մյուս ծայրից ձայներ լսեց եւ շտապեց այդ ուղղությամբ:

Դա տեղի էր ունեցել ուրբաթ օրվա մեջտեղում. մայրաքաղաքի գրեթե բոլոր հիվանդանոցները՝ լիքը հիվանդներով, փակվել էին, իսկ կապը դրանց հետ անջատվել էր: Երբ փրկարարները փորձեցին դուրս հանել մարդկանց, պատուհաններից եւ դռներից դուրս թռան մոծակներ՝ մեծ ու կարմիր: Եվ ինչպես հայտնաբերվեց մի քանի ընկած անց՝ թունավոր: Անհայտ էր, թե ինչ մոծակներ էին, եւ ինչպես պաշտպանվել դրանց թույլից:

Երբ բացում էին երկրորդ հիվանդանոցը, եկավ հրաման՝ թողնել ամեն ինչ փակ: Հակառակ դեպքում մոծակները կարող էին տարածվել եւ էլ ավելի մեծ վնաս պատճառել:

Մարդիկ մեծ աղմուկ բարձրացրեցին՝ պահանջում էին փրկել իրենց բարեկամներին, բայց իրենք էլ էին հասկանում, որ դա վտանգավոր է:

Դուրս եկած մոծակներին ոչնչացրեցին կամ ուղարկեցին ուսումնասիրության, եւ միայն հինգ օր անց, երբ թույլը չեզոքացնող կոկոս գտան, թույլ տրվեց բացել հիվանդանոցները եւ մաքրել դրանք:

Այդ ամենը Ռադիացիոն, քիմիական եւ կենսաբանական պաշտպանության զորքերի ավագ սերժանտ Սիմոնյանը պատմեց բժշկուհուն եւ տարեց մարդուն, որոնք մի ամբողջ շաբաթ կարողացել էին կենդանի մնալ:

- Այսօր ձեր հիվանդանոցը առաջինն ենք մաքրում:

Եղանակը հիաշքանչ էր՝ աշևան սկիզբ, արեւ: Միակ բացասական կողմն այն էր, որ պաշտպանիչ համազգեստով չափազանց շոգ էր:

- Մենք մոծակների հայտնվելուց միանգամից հետո քնեցինք,- ասաց բժշկուհին,- ինչի՞ց էր դա...
- Քնեցնող գազ:
- Հա... Մենք չհասցրեցինք ստուգել, բայց հիվանդանոցում հավանաբար էլի մարդիկ կան:
- Եթե կան, մենք նրանց կգտնենք, օրիորդ: Կարող եք չանհանգստանալ: Սերժանտի հեռախոսը գանգեց: Չանգը կենտրոնից էր:
- Դո՛ւք եք բացել ձեր կողքի մանկական պոլիկլինիկան:
- Ի՞նչ... Ո՛չ, մենք դեռ այստեղ չենք ավարտել:
- Մարդ վերցրե՛ք, գնացե՛ք ստուգե՛ք՝ պոլիկլինիկայում ինչ ա կատարվում:
- Լսում եմ:

Բժշկուհին վախեցած նայում էր նրան:

- Ինչ-որ վատ բան է պատահել:
- Ո՛չ, մի՛ անհանգստացե՛ք: Էստե՛ղ մնացե՛ք, մեր տղաները ձեզ շուտով կուղեկցեն աշխատող հիվանդանոց:
- Լավ:

Բժշկուհին մոտեցավ մեքենաներին, իսկ սերժանտը եւ եւս մի քանի հոգի գնացին դեպի մանկական պոլիկլինիկա: Այն գտնվում էր մի փոքր հեռվում՝ բլրի վրա: Մետաղյա փեղկերը բաց էին, բայց դրսում ոչ ոք չկար: Սերժանտը մտավ ներս եւ նայեց շուրջը: Մոծակներ ու դիակներ՝ ամեն ինչ ճիշտ այնպես էր, ինչպես մնացած հիվանդանոցներում: Միայն մեկ տարբերությամբ՝ դռան կողքի պատին հենված երկու դիակները դեռ չէին հասցրել քայքայվել: Միայն մաշկի գունատությունն ու շնչառության բացակայությունն էր վկայում, որ այդ տղաներն արդեն մահացել են: